

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ**

**ВОПРОСЫ ИСТОРИИ
МИРОВОЙ ЭСТЕТИКИ**

**Հեզելը պոեզիայի և գեղանկարչության
հարաբերակցության
ու փոխազդեցության մասին**

Թեև ոչ առավել, քան երաժշտությունը, սակայն բավարար չափով Հեզելը ուշադրություն է հատկացրել պոեզիայի և գեղանկարչության հարաբերակցության քննությանը: Եթե իրենց ոգեկանությամբ և զգացմունքային բովանդակությամբ՝ ժամանակի մեջ դիմամիկ զարգացող հնչյունով և տևականությամբ, իրար շատ մերձ գտնվող պոեզիան ու երաժշտությունը լայն հնարավորություններ էին տալիս բացահայտելու դրանց հարաբերակցության և գլխավորը՝ փոխազդեցության շատ հայեցակետեր, ապա լինելով պլաստիկ, տարածական և ստատիկ արվեստ՝ գեղանկարչությունը, որպես պոեզիայի հակոտնյա, երաժշտության համեմատ սահմանափակ եզրեր ուներ դրա հետ հարաբերվելու:

Հավատարիմ արվեստի յուրաքանչյուր տեսակի՝ հատուկ առավելություններ ու սահմանափակումներ ունենալու վերաբերյալ իր սկզբունքին՝ Հեզելն այս առումով է բնութագրում և համեմատում պոեզիան ու գեղանկարչությունը՝ գրեթե միշտ նշելով, թե դրանք ի՞նչ են *շահում* և ի՞նչ *կորցնում* (Հեզելի բառերն են) միմյանց հետ համեմատելիս:

Անդրադառնալով պոեզիայի և գեղանկարչության առնչության հանդեպ նկատվող հետաքրքրությանը՝ Հեզելը գրում է. «Եթե նորագույն ժամանակներում խոսում են պոեզիայից և գեղանկարչությունից, ապա դա սոսկ նշանակում է, որ առարկան յուրացվում է երևակայությամբ, իսկ զգացմունքները մեկնաբանվում են գործողությամբ»: Ապա, պարզաբանելով իր միտքը, նա գրում է. «Այստեղ ձգտում չկա՝ զսպելու վերացական զգացմունքը և այն արտահայտելու որպես այդպիսին»: «Նույնիսկ պոեզիան, — ընդգծում է նա, — որ կարող է զգացմունքն արտահայտել նրա ներսի կողմից, բացահայտվում է պատկերացումներում, բովանդակության մեջ և դիտարկումներում...»¹:

Չուզադրելով գեղանկարչության հետ, ինչպես երաժշտության (այնպես էլ, ի դեպ, արվեստի բոլոր մյուս տեսակների) առնչության դեպքում էր, Հեզելն առաջնության դափնին վերապահում է պոեզիային: Ու դա նույնիսկ այն դեպքերում,

երբ այն ինչ-որ հարցում զիջում էր նրանց: Եվ, ինչպես միշտ, խոսելով պոեզիայի մասին, նա այնպիսի հասկացություններ է կիրառում, ինչպես (ինչոդ ու գրավոր) լեզուն է, խոսքը, բարձրագույն ոգեկանությունը: Ինչ վերաբերում է գեղանկարչությանը, ապա Հեգելի բնորոշմամբ, լույսն այն ֆիզիկական տարրն է, որն օգտագործվում է որպես ընդհանրապես առարկայության տեսողական դրսևորման համընդհանուր միջոց (III, 201): Գեղանկարչության մեջ լույսի դերին նա անդրադառնում է քանիցս՝ նշելով, որ միասնության մեջ, իր այլակեցության՝ մթության փոխներթափանցմամբ, այն «կազմում է գույնի՝ իրն գեղանկարչության բուն նյութի սկզբունքը» (III, 202)²: Իհարկե, «գույնը որպես այդպիսին, դեռ գեղանկարչություն չէ» և դրա համար հարկ է, որ դրան միանան կերպարն ու դրա արտահայտությունը (III, 286): Սակայն իր այդ դերում «գեղանկարչության մեջ կենսականության բարձրագույն սահմանը կարող է արտահայտվել միայն գույնի միջոցով» (III, 244), որը նրա կողմից բնութագրվում է որպես «զգացմունքային կերպի ինքնություն տարր» (IV, 76): «Այդ պատճառով է, - գրում է նա մեկ այլ տեղ, - որ գույնի և լուսավորության մեջ մենք գտնում ենք նկարիչների մեծագույն զանազանություններն ու ընկալման ինքնատիպ միջոցները» (I, 303): Վերջապես, գեղանկարչության գնահատման հարցում գործածվող հասկացությունների շարքում Հեգելի մոտ հանդիպում են «տեսանելիության» (I, 92-93) և «գունային երևույթականության» (III, 277) հասկացությունները:

Ըստ Հեգելի, հակառակ պոեզիայի (երաժշտության և քանդակագործության)՝ գեղանկարչությունը պետք է առավելապես անդրադառնա և այն իրերին, որոնց արտացոլումը նա կարող է տալ արտաքին կերպարի միջոցով (III, 207): Սակայն որպես արվեստ, գեղանկարչությունը չի կարող լինել առանց հոգևոր բովանդակության. և՛ արտաքինը, և՛ հոգևորը դրանում անցնում են ինքնատիպ ճանապարհ: Այսպես. եթե սկզբում գեղանկարչական արվեստը ներքին հոգևոր սկիզբն արտածում է դեպի «արտաքին օբյեկտիվություն», ապա այնուհետև կրկին ազատում է ոգին հայեցողականության այդ արտաքին տարերքից հետևյալ կերպ: Մի կողմից՝ «ոգին դրանում գտնում է իրեն, ներքին սկիզբը, հոգևոր ստեղծագործությունը, մյուս կողմից՝ տեղ չի մնում սուբյեկտիվ ինքնատիպության, քանի որ բովանդակությունը բացահայտվում է դրա անհատականության կատարյալ որոշալիությամբ» (III, 323):

Հենց այս առանձնահատկության շնորհիվ է գեղանկարչությունը շահում բոլոր այն դեպքերում, երբ կարևոր է դիտման ներկայացնել որոշ բովանդակություն «նաև դրա արտաքին երևույթի կողմից» (III, 344): Դրանում նա շահում է նաև պոեզիայի համեմատությամբ: Ու թեև վերջինս բազմազան միջոցների օգնությամբ ևս կարող է տալ ակնառու պատկեր, սակայն իր առանձնահատկության, այն է՝ հոգևոր բնույթ ունեցող պատկերացման տարերքի շնորհիվ, այն ի գործու չէ հասնելու ակներև զգայական հայեցողության որոշակիության (անդ), այսինքն՝ մրցել գեղանկարչության հետ: Հեզելը հատուկ զգուշացնում էր, որ պոեզիան չձգտի մանրամասների անշտապ նկարագրության, քանի որ նրա կոչումը հոգևոր հարաբերություններ և շահեր չարտացոլող զգայական երևույթի ձևերով արտաքինը ներկայացնելու մեջ չէ: Նման դեպքերում պոեզիան «դառնում է ծանրաքաշ և ծանձրալի»: Հեզելը հատուկ ընդգծում էր, որ գեղանկարչության մեջ ևս հարկ է զգույշ լինել և իրեն սահմանափակել ճշգրիտ մանրամասնման հարցերում: Առավել ևս սա վերաբերում է պոեզիային, որը կարող է ներագդել միայն ներքին հայեցողության վրա և «լույ առանձին պահերի և հետևողականորեն փոխանցել այն պատկերացումը, որը բուն իրականության մեջ կարելի է տալ մի հայացքով» (III, 365):

Ընդհանրացնելով գեղանկարչության ինքնատիպ խնդիրների վերաբերյալ իր գնահատականը՝ Հեզելը գրում է, որ սկզբից ևեթ գեղանկարչությունից պահանջվում է բնավորությունները, հոգին, ներքին կյանքը չնկարագրել այնպես, ինչպես այս աշխարհը անմիջականորեն ճանաչվում է իր արտաքին ձևով, «այլ արտահայտել այն, ինչ այս աշխարհը իրենից *ներկայացնում է*» (III, 245) և անմիջապես էլ ընդգծում է, որ այս վերջին պահով էլ գեղանկարչությունը հարաբերվում է *պոեզիայի* հետ: Ամրագրելով հանդերձ դրանց սերտությունը՝ Հեզելը, ելնելով այդ երկուսի՝ մասամբ առավելություններ, մասամբ էլ՝ թերություններ ունենալու հանգամանքից, տալիս է դրանց ծավալուն համեմատական բնութագիրը՝ ի ցույց դնելով առանձնացված հատկանիշները:

Հարցի բնությունը Հեզելը սկսում է նրանից, որ գեղանկարչությունն ի գործու չէ պոեզիայի (կամ երաժշտության) նման ներկայացնելու ինչ-որ իրավիճակի, դեպքի կամ գործողության զարգացումը «փոփոխությունների *հաջորդականությամբ*, այլ ձգտում է ընդգրկել ժամանակի լույ մի պահ», որում գործողու-

թյունը կամ վիճակը նկարագրվում է ամբողջությամբ: Այստեղից էլ այնպիսի ակնթարթի որոնման անհրաժեշտությունն է, որում նախորդողն ու հաջորդողը խտանում են մեկ կետում, անցյալի մնացորդը դեռ ի հայտ է գալիս ներկայում և միաժամանակ ուրվագծում է ապագան, որն առաջանում է ներկայացված իրավիճակից՝ որպես դրա հետևանք (տե՛ս նույն տեղում):

Այս իմաստով նկարիչն անկասկած գիջում է բանաստեղծին, բայց այս սահմանափակման մեջ ունի այն առավելությունը, որ «կարող է նկարագրել որոշակի տեսարան իր կատարյալ ինքնատիպությամբ՝ դրա հայեցողության համար զգայապես մարմնավորելով իրական կերպարը» (III, 245-246): Հիշեցնելով լատինական սիրված ասույթը՝ «Թող պոեզիան դառնա գեղանկարչություն», Հեգելը մատնանշում է, թե որքան անօգնական է դառնում պոեզիան գեղանկարչությանը նմանվելու իր ձգտման մեջ՝ օրինակ, նկարագրական ժանրում: Տարվա եղանակների, օրվա ժամերի, գույների, բնանկարների և տարբեր իրավիճակների նկարագրությունը բառերի միջոցով, Հեգելի կարծիքով. «Մի կողմից, շատ չոր է ու տաղտկալի և մանրամասների մեջ մտնելու պատճառով երբեք չի կարող ավարտվել, մյուս կողմից՝ այն մնում է խճողված, քանի որ պատկերացումների հաջորդական հերթագայության միջոցով պիտի տա այն, ինչը գեղանկարչության մեջ միանգամից է տրված հայեցողության համար»: Ի հակակշիռ դրան, գեղանկարչությունը շահեկան դիրքում է շնորհիվ նրա, որ կապակցվածության և համաժամանակության մեջ նա ներկայացնում է այն, ինչ տարածության մեջ կապված է մեկմեկու (III, 246):

Սակայն գերազանցելով պոեզիային (և երաժշտությանը) այս կետում՝ գեղանկարչությունը կրկին գիջում է նրանց քնարական տարրի հարցում: Այն դեպքում, երբ պոեզիան կարող է քնարական զգացմունքներն ու կերպարները նկարագրել ոչ միայն որպես ընդհանրապես զգացմունքներ ու կերպարներ, այլ ցույց տալ հերթագայությունը, ընթացքն ու ուժգնացումը զարգացման մեջ, գեղանկարչությունը կարող է օգտագործել միայն դեմքի՝ արտահայտությունն ու կեցվածքը՝ դրա հետ միաժամանակ թյուր կերպով ըմբռնելով քնարական տարրի առնչությամբ իր միջոցները, քանզի միմիկայի և մարմնի շարժման միջոցով ներքին կրքի և զգացմունքի արտահայտությունը «վերաբերում է ոչ թե անմիջականորեն զգացմունքին որպես այդպիսին, այլ զգացմունքի՝ իր որոշակի դրսևորման մեջ,

իրադարձությանը, արարքին»՝ առանց որոշակի մոտիվի ու գործողության (Անդ): Իսկ դա, ըստ Հեգելի, նշանակում է «գեղանկարչությունը սահմանափակել արստրակցիայով, որից նա պիտի խուսափի, և նրանից պահանջել պոեզիայի ինքնատիպության տիրապետում»: Եվ ինչպես գեղանկարչությանը հետևելու պոեզիայի փորձերում վերջինս դառնում է չոր և տաղտկալի, այնպես էլ գեղանկարչությունը պոեզիային մասնավելու այդօրինակ էքսպերիմենտի արդյունքում դառնում է չոր և քաղցրածոր (III, 246-247):

Այսպիսով, հակառակ լատինական ասույթի, պոեզիան, ըստ Հեգելի, չպիտի վերածվի գեղանկարչության, վերջինս էլ՝ պոեզիայի: Դրանցից յուրաքանչյուրը պիտի ինքնադրսևտրվի իր իրավասության սահմաններում, որն ամենևին չպիտի քացառի նրանց փոխօգնությունն ու փոխառումը, ինչն իրենց մոտ քացակայում է: Այսպես, պոեզիան, գեղարվեստական մարմնավորման պահանջ զգալով և ձգտելով ավելի ուժեղ զգացմունքային տպավորության, ունակ է դրանց հասնելու երաժշտությունից ու գեղանկարչությունից փոխառած և իրեն խորթ միջոցներով միայն, կամ էլ իրեն՝ որպես իսկական պոեզիա պահպանելու համար «իրեն հարազատ այս արվեստներն ընդունել լոկ օժանդակող դերում»՝ առաջին պլանում որպես գլխավոր պահ պահպանելով հոգևոր պատկերացումը և ներքին երևակայությանն ուղղված երևակայությունը» (III, 352-353):

Պոեզիան և գեղանկարչությունը զուգադրելիս Հեգելը, վերջինիս առավելությունները նշելով հանդերձ, առաջությունն ընդհանուր առմամբ տալիս է պոեզիային՝ ընդգծելով արժանիքների գերազանցությունը պակասությունների նկատմամբ: Այսպես, ընդունելով, որ գեղանկարչության (և ոչ միայն արվեստի այս տեսակի) համեմատությամբ պոեզիան մեծապես գիջում է արտաքին օբյեկտիվության հարցում, այն «շահում է գիտակցության համար պոետական լեզվի հայեցումների և պատկերացումների ներքին օբյեկտիվության առումով» (III, 286): Այս համոզմամբ Հեգելն ավելի առաջ է անցնում՝ հայտարարելով, որ «գեղանկարչության համեմատ զգայական ռեալության և արտաքին որոշակիության պակասը *պոեզիային անմիջապես տրալիս է անհաշիվ առավելություններ*» (III, 345: Ընդգծումը մերն է – Յա.Խ.)՝ քանի որ կորցնելով մեկում, այն ձեռք է բերում մյուսում: Այս միտքը նա հետևյալ կերպ է քացատրում. գե-

դանկարչության նման դադարելով սահմանափակվել որոշակի տեղում և առավել ևս իրավիճակի կամ գործողության որոշակի ակնթարթում՝ պոեզիան սրա շնորհիվ հնարավորություն է ստանում «արտացոլելու առարկան իր ներքին ողջ խորությամբ, ինչպես նաև ժամանակի մեջ ծավալման լայնությամբ» (անդ): Սրան պոեզիան հասնում է շնորհիվ այն բանի, որ մեզ է ներկայացնում օրյեկտիվ աշխարհն այնպիսի լայնությամբ և բազմակողմանիությամբ, ինչին չի կարող հասնել գեղանկարչությունը (III, 352):

Ամփոփելով շարադրանքը՝ կարելի է ասել, որ պոեզիայի և գեղանկարչության հարաբերակցությունը, ըստ Հեգելի, դրսևորվում է գրական միջոցներով բնանկարներ կամ որոշակի իրավիճակներ գեղաձևելու նպատակով պոեզիայի կողմից գեղանկարչության որոշ հնարքներ օգտագործելու եղանակով: Իսկ գեղանկարչության առումով այն հանգում է կտավների համար պոեզիայից սյուժեներ և քենաներ փոխառելուն:

Ծանոթագրություններ

1. Гегель «Эстетика» в четырех томах (1968-1973), М., т. III, с. 248 (հետագայում հղումներն այս հրատարակությունից կտրվեն հոդվածի տեքստում հատորի և էջի հիշատակումով – Ցա. Խ.):

2. Հետաքրքրություն են ներկայացնում Հեգելի դատողությունները լույսի, ստվերի և գույնի մասին (տե՛ս III, 202-203):